

Վերականգնվող էներգետիկայի զարգացման համար բոլոր նախադրյալները կան

28.06.2011 16:36



Արտակ Բարսեղյան

«Ռեդիոլուր»

Մեր երկրում առկա են բոլոր նախադրյալները վերականգնվող էներգետիկայի զարգացման համար, և դա հեֆիաթ չէ, այլ իրականություն, հայտարարեց Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի տնօրեն

Թամարա Բաբայանը: Նրա ղեկավարած այս կառույցն իր գործունեությունը սկսել է 2005թ. նոյեմբերից և իրականացնում է վարկային և դրամաճնորհային ծրագրեր՝ ուղղված վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտների զարգացմանը:

Հիմնադրամն այսօր ներկայացրեց ոլորտում իրականացված բազմամյա ուսումնասիրությունների արդյունքները, որոնք հավաքված են ալմանախում: Այստեղ, մասնավորապես, ներկայացված է վերականգնվող էներգետիկայի ուղեցուցային ծրագիրը, փոփոխվող էրի զարգացման սխեման, արևային ֆոտովոլտատիկ տեխնոլոգիաների հեռանկարներին, կենսավառելիի արտադրության հնարավորություններին նվիրված ուսումնասիրություններ, այլ նյութեր:

Ըստ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի զարգացման ուղեցուցային ծրագրի՝ մեր երկրում կարող են իրագործվել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարային ծրագրեր: Մասնավորապես՝ Հայաստանը կարող է օգտվել երկրում առկա վերականգնվող էներգիայի զգալի պաշարներից:

Հիմնադրամի կատարված ուսումնասիրություններին մասնակցել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղացի փորձագետները: